

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մէճ.
Պաշտօնաց 10 Մէճ.
Վեցամեայ Կ. Պոլսոյ 4 Մէճ.
Պաշտօնաց 5 Մէճ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Կանոնական տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը լինայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրիւսիա 9 յունիս.

Երեսփոխանական և Երեսփոխարին
ժողովոյ մասնական վերահսկողման
համար երկամեայ ընտրութիւններն
այսօր կատարուեցան: Երեսփոխարին
ժողովին մէջ աղատականք 2 ամբողջ
կը վստակին, որով կը երական մեծա-
մասնութիւնը ճէն և ի կիջնէ: Երես-
փոխանական ժողովին մէջ ալ աղա-
տականք և ամբողջ կը վստակին, որով
հոն ալ կը երական մեծամասնութիւնը
22 էն 14 ի կիջնէ:

Փարիզ 10 յունիս.

Աղգային ժողովը քաղաքապետա-
կան և թաղապետական խորհրդոց
ընտրութեանց վերաբերեալ նոր օ-
րինաց մէջ՝ յանձնաժողովոյն առա-
ջարկած ընտրողական 23 ամեայ հա-
տակին տեղ՝ 21 ամեայ հասակն ըն-
դունեց:

Քիւնիգ 10 յունիս.

Քիւնիգային կազմէ լրագրիւր կը
ծանուցանէ թէ Գաղղիոյ և Անգլիոյ
կառավարութեանց մէջ փոխանակ-
ւած թղթակցութեան մ'ետե՛ն Անգ-
լիոյ կառավարութիւնը խոստացեր է
Եղեբ Ռօշֆօրն և ուրիշ փոխտեսայ-
ները Գաղղիոյ կառավարութեան ձեռ-
քին յանձնել, թէ Անգլիոյ Եղեբն:

Վիեննա 11 յունիս.

Պորսան խիստ տաք է. Գլխաւոր
արժէքները կը բարձրանան, ի բաց
առեալ Օսմանեանները:

Հնձոց վիճակին վրայ հետզհետէ
լուսադոյն լուրեր կուգան, և այս
պատճառաւ երկաթուղեաց բաժին-
ները կը փնտռուին ու կը բարձրանան:

Փարիզ 11 յունիս.

Աղգային ժողովոյ մէջ Պ. Կամ
պէթթայի ըրած թշնամանքէն ի վեր
մեծ յուզմունք կայ Պոստարթեանց
մէջ: Պ. Տըքազ հրաժարական տալու
սպառնալիք ըրեր է, որովհետեւ ներ-
կայ՝ նախարարութիւնը չափազանց
սխալմունքներ կը վարուի Պոստ-
արթեանց հետ:

Զրոյց կայ թէ Պ. Ռօշֆօր Զուլի-
ցերիս պիտի երթայ:

Հոմ 11 յունիս.

Կը հաւատարմէ թէ Պիւստարթի լիշա-
նը խորհուրդ տուեր է մեր կառա-
վարութեան որ երկամեայ վիճակը
բարուրեալ համար զօրաց թիւը
պակսեցնէ:

* Այս լուրն անհաստատի կը թը-
ւի մեզ:

** Պ. Կամպէթթայ « թշնամական »
կոչեր է զանոնք:

Լոնտոն 11 յունիս.

Պ. Տը Լէսէթս՝ թայմը լրագրին
ուղղած նամակաւ մը կը յայտնէ թէ
ինքը ջրանցքը փակելու սպառնալիք
ըրած է, այլ միայն իր պայմանադ-
րին բռնաբարուելուն դէմ կենալու
յայտարարութիւն ըրած է: Կաւեյցնէ
թէ ոչ ընկերութիւնն և ոչ ալ խա-
վին երեսփոխան ունեցած չէն նաւա-
ւադի յանձնաժողովին մէջ, և յանձ-
նաժողովը ալ երբէք մտքէն անցու-
ցած չէր իր առաջարկութիւնը բու-
ռն հարկութեան և զէնքով դրա-
ման դարձունել: Անգլիոյ Գլխաւոր
գործարարութիւնը միայն գործածեց
այս դերը՝ Դրան պատասխանատուութեան
ներքեւ: Վերջապէս ընկերութիւնն
երբէք գիտաւորութիւն ունեցած չէ
տեղական իշխանութեան անկախ պա-
հապան զինուորներ դնել ջրանցքին
եղեբը, ինչպէս որ ոմանք համբա-
ւեցին: Պ. Տը Լէսէթս այսպէս կեղծա-
կացնէ իր նամակը. « Երբոր այս սը-
լաշներն ուղղուին, կրնանք համա-
ձայնիլ »:

Հէնտայէ (Սպանիա) 11 յունիս.

Պասք գաւառէն բազմութիւն հը-
րոսակաւներ Տոն Բարրոսի դէմ ոտք
եղան, կեցցէ Ֆուէրոս Ի Բալա գոյե-
րով: Տոն Բարրոս զանոնք հրայանի
բռնել հրամայեց:

Փարիզ 11 յունիս.

Պորսայէն ետեւ Օսմ: Քոնստանտին
մինչև 45, 25 ի իշաւ, յետոյ 45, 50 ի
եղաւ: Բայց վերջը ժամը 11 ին 45 ի
իշաւ Պոլսու իրայ:

Լոնտոն 12 յունիս.

Օսմ. Քոնս. 45
Փոխ 4865 52
» 4869 —
» 4874 61 3 4
» 1872 77 1 4
Անգլ. Քոնս. 92 11 46

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Հէրսէքի կառավարիչ Հասան պէյ
Ֆիլիպէյի կառավարիչ անուանեցաւ:
Թրակիոյ կառավարիչ Բեզլան
փաշան Հէրսէքի կառավարիչ անուա-
նեցաւ:

Երբեմն իսկիւտարի կառավա-
րիչ Թոսուէ փաշան Կէլիպօլուի կա-
ռավարիչ անուանեցաւ:

Վիեննայի Օսմանեան գեւաղան
Քապուլի փաշան հինգշաբթի օրը Կ.
Պոլսի հասաւ:

Նիկոմիդիայէն և ուրիշ գաւառ-
ներէ եկած լուրեր կը ծանուցանեն
թէ շերամատածութիւնը մինչև ցարդ
յաջող վիճակի մէջ է, և թէ շատ տեղ
շերամները խողով կ'ապել սկսած են:

Գերմանական Մէթէօր շոգեւան
երէկ վառնա գնաց Գերմանիոյ նա-

ընտիր գեւաղան վերթէր Պարոնը
Կ. Պոլսի բերելու:

Վեհ. Սուլթանին գահակալու-
թեան տօնին գիշերը Բոսփորի նեղ-
ցին մէջ պարտող նաւակներուն պատ-
ւէր տրուեցաւ քաղաքապետութեան
կողմէ, որ նաւակներուն գլուխը մէկ
մէկ լապտեր կ'ախեն, որպէս զի վը-
տանդի չհանդիպին:

Շիրքէթի խայրէի շոգեւանաց
երթեւեկութեան ժամերն այսօր փոխ-
ուեցան (Տես լրագրոյս վերջին երե-
սը):

Զորքը թիւ օրը՝ երեք այլ և
այլ կնքով կնքուած և տեղական
թղթատարութեան միջոցաւ ոստի-
կանութեան նախարարին ձեռք հա-
սած գաղղիերէն անտորադիր նա-
մակ մը կ'ուսնէր Նորին վսեմութեան
թէ՛ Պ. Նիքօլիզն սպաննող խրովածը
Ղալաթի Դոմինիկեանց Ս. Պետրոս
վանքին մէջ պահուած է, ուստի ե-
թէ Ն. վսեմութիւնն յիշեալ վանքին
գետնափոր յարկերուն, կրօնաւորաց
խցիկներուն, ինչպէս նաև շրջակայ
տուններուն մէջ խուզարկութիւն ընէ,
ոճրագործն անշուշտ պիտի գտնէ:

Վսեմ. Հիւսնի փաշան այս գիշերն
ստանալուն պէս՝ Գաղղիոյ և Աւստ-
րիոյ գեւաղանաց հետ բանակցելով,
զորքը թիւ իրիկուն Գաղղիոյ հիւ-
պատուն և Աւստրիոյ գեւաղանատան
մէկ գործակալին հետ ոստիկանու-
թեան զինուորներ կը դրէ վանքը
խուզարկելու: Երբոր վանքին դուռը
կը հասնին, հիւպատոսը թող չտար
զինուորներուն որ վանքը մանեն, եւ
միայն Աւստրիոյ գեւաղանատան գոր-
ծակալը հետն առնելով ներս կը մտ-
նէ և ժամուկէսէն ետեւ գուրս ել-
նելով կ'ուսնէ թէ բնաւ կ'ստա-
ծելի մարդ չկար վանքին մէջ:

Երէկ իրիկուն ժամը չորսին մի-
ջոցները Գաղղիոյ նաւամատոցին
մօտ հրդեհ պատահելով տուն մ'է
խանութ մ'այրեցաւ:

Կըսուի թէ երկու գեղադր զին-
ւոր՝ հրդեհը մարելու աշխատած ժա-
մանակ՝ յանկարծ պատ մը փլուզով
տակը մնացեր են:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՅՆԱՍՏՈՒՆՈՒՄԻՆԵ

31 մայիս.	ուրբաթ իրիկուն	50.25
1 յունիս.	շաբաթ առաւօտ	50.40
	բացուեցաւ	50.5
	կէս օր	50.5
	Կ. Պոլսի 31 մայիս,	
Սօսիթէթ Ժէնէրալի բաժինը Անգլ. իր.		6.22
« Գոստանկութեան »		4.25
Կ. Պոլսոյ Պանքային »		4.25
Քրէտի Ժէնէրալ »		9.40
Քրէտի Օսթրո-թիւրք		
Երկաթուղեաց հին		
» նոր		
Փոխ.	4863	» 340
»	4865	» 341
»	4869	» 270

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց հանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լսոյ, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

» 1872 » » 80
Փոխ. 1873 » » 5 46
Թրամուլ 0 մ. լիւ

ԵՆՔԱՅՔ ԴՐԱՄՈՑ
31 ՄԱՅԻՍ

Անգլ. իր.	գուրուշ	440.20
Նաւալ ա. ոսկի »		87.32
Իւսի. ա. իւսի »		89.20
Գ. արմից »		51.20
Հինգ ֆրանք »		—
Հինգից »		405.40
Պոլսի »		424.20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկո-
սին կողմանէ երէկ իրիկուն հետեւեալ
չնորհաւորութեան հեռագիրն եկաւ
առ Ս. Պատրիարք Հայրն:

Էջմիածին 12 յունիս (ըստ
Լատ.) 1874

Նորին Սրբազնութիւն Ներսէս Արք.
եպիսկոպոս Պատրիարք Հայոց
Ի Կ. Պոլսոյ:

Ձեր համաձայնութեամբ ընտրու-
թիւնն ի Պատրիարքութիւն կը ներ-
շնչէ յիս աղգային վրդովմանց մօ-
տալու խաղաղութիւնն:

Կաղաքեմ զԱստուած ի բոլոր սըր-
տէ որ պահպանէ զձեզ ընդ հովան
եաւ իւրով:

Կաթողիկոս և ծայրա-
դոյն Պատրիարք Հայոց
ԳԵՂՈՐԳ.

Այսօր Յունաց Ս. Պատրիարքին
կողմանէ մեր Ս. Պատրիարքը չնոր-
հաւորելու եկան Յունաց Պատրիար-
քական փոխանորդ Գալինիկոս Արհի-
մանտիտը, Սէրէզի Մետրապօլիտ
Գեր. Նէօֆիթօս, Պէրիւրատի Մետրա-
պօլիտ Գեր. Անթիմոս, երկու սար-
կաւագով և երկու ետաքճիկներով,
Տիմիթրիոս Էֆէնտի Չօլաքեան և ս
հետերին ըլլալով թարգմանութիւն
կընէր եղած խօսակցութեանց՝ որ
խիստ սիրալիւ և համակրական էր:

Այցելուք Ս. Պատրիարքին քո-
վէն մեկնելէ ետեւ՝ մեր Պատրիար-
քական փոխանորդին հետ ալ տե-
սութիւն ըրին, և Մայր եկեղեցին
երթալով երկրպագութիւն ընէին
վերջը մեկնեցան:

Այս այցելութիւնը պէտք է կա-
նոն բռնուի այսուհետեւ նմանօրինակ
պարագայից մէջ, այսինքն երբոր Յու-
նաց աղղը Պատրիարքական փոխ-
նալ թիւն ընէ, մեր Պատր. փոխանոր-
դին երկու եպիսկոպոսով չնորհաւո-
րութեան երթայ նորընտիր Պատրի-
արքին:

Ուրիշ կերպ ընելը, այսինքն մեր
Պատրիարքին անձամբ չնորհաւորու-
թեան երթալը՝ մեծ նաւաստութիւն
մ'է, զոր Հայոց աղղը չկրնար եր-
բէք ընդունիլ:

Ս. Էջմիածնէն անցեալ շաբթու
գիրք եկան ի Պատրիարքարան, ու

վասն որոյ և մնաց անյոյզողող այն առա-
քինութեան ճանապարհի վերայ, յորում
առ ահագամ մի իւր ոտն դրել էր հաստա-
ստուն :

Հեռեւեւ լսում

... Էֆէնտի :

Ժամանակէ մ'ի վեր ճեմ Երկս-
վարժարանի աշակերտութեանց ոտա-
նաւոր գրութիւնք 'ի քաջալերութիւն
ուսանողաց' Հայրենիք լրագրոյն մէջ
հրատարակուել սկսած են :

Հայրենիքի 191 թուոյն մէջ Զ.
Թ. Խանճեան ստորագրութեամբ ո-
տանաւոր մ'ալ հրատարակուեցաւ :

Մասին պատուական լրագրոյդ
1926 թ. թուոյն մէջ «Բանագործու-
թիւն» վերնագրով նամակ մը յայտ-
նելով թէ նոյն ոտանաւորը Գեր. Խո-
րէն Սրբազանի վարդենիք անուն
գրքէն գողցուած է, կծու ակնար-
կութիւններ կընէր :

Կը փախաբէինք որ պէտք ե-
ղած պատասխանը ժամանակին կա-
րենայինք տալ, սակայն անձնական
տկարութեան առթիւ մեր բացակա-
յութիւնը չէր կրնար ներել որ մեր
այս փախաբեցողութեամբ լինէր :

Ուստի մեր վերագրածին սոյն
պարագաներուն վրայ պէտք եղած
տեղեկութիւններն առնելով փութա-
ցինք գրութեան ձեռնարկել, որոյ
հրատարակութիւնը կըլինէր մեր
մերձակայ թուոյն միոյն մէջ :

Զու է մեզ տեսնել թէ սխալմունք
մը տեղի տուած է այդ ոտանաւորին
հրատարակութեան, և այն խիստ սկի-
նարկութեանց' զորս պատուական
լրագրոյդ մէջ կարգացինք :

Մեր նպատակը Մեծ. նամակագ-
րին հետ 'ի վիճաբանութիւն մտնել
չէ, այլ միայն յայտնել թէ՛ Մեծ.
գասաւորն աշակերտները քերական
նախան կանոնաց, աշխարհաբառ և
գրաբառ գրութեանց վարժեցնելին
յետոյ՝ միջոց մ'ալ սկսած է զանա-
զան մատենաներէ արձակ կամ ո-
տանաւոր գրութիւններ տալ, որոյ
վերայ աշակերտք ինչ ինչ յաւելուած-
ներ ընեն և տեղ տեղ փոփոխեն. այս
կարգէն է նաև Օրիորդ Զապէլի ո-
տանաւորը, զոր վարժարանին Մեծ.
գասաւորն առկէ իբր վեց ամիս
յառաջ նոյն Օրիորդին տուած էր,
որպէս զի առանց իմաստն այլայլե-
լու փոփոխել իւր կրցած տողերը, և
յաւելուածներ ընէ. իսկ այն տողերը
զորս չէ կարող կամ արժան չըգտնել
փոխել, նոյնը պահէ. Ահա այս կեր-
պով խմբագրուած է յիշեալ Օրիոր-
դին ոտանաւորը, որն որ ուրիշ ոտա-
նաւորաց հետ մասնաւոր տեսլի մը
մէջ արձանագրուած կը կենար :

Մօտ ժամանակներս երբ Մեծ.
Հայկաբան գասաւորին և Տեղու-
թեան որոշմամբ այս ոտանաւորները
հետզհետէ հրատարակուելու որոշու-
մըն եղաւ, Մեծ. Գեղեցեան Սիմոն է-
ֆէնտի' Հայկաբան գասաւորն ինք-
նովին նոյն տեսլի տասնի չափ ո-
տանաւորներ հաւաքելով 'ի հրատա-
րակութիւն տալու ձեռնարկած էր
առանց կարենալ յիշելու թէ՛ ասոնց
մէջէն խնդրոյ նիւթ եղող նոյն ոտա-
նաւորէն թէ և տասն և վեց տողերը
հեղինակութիւն ըլլան, ամբողջ հե-
ղինակութիւն չէր :

Գալով այն խնդրոյն թէ արդեօք
նոյն Օրիորդը բաւական դոհացուցիչ
ոտանաւոր մը կրնայ գրել, արդէն
նոյն ոտանաւորին տասն և վեց տողե-
րը՝ որոյ հրատարակութիւնը Մասին
Մեծ. նամակագիրը զանց բրած է,
և մենք յետ գրութեան կը ներկա-
յայցենք, պէտք էին ապացուցանել
թէ՛ բանագործեան հարկ չկար :

և նոյն գրողը կրնար բաղմամբ առ-
դերէ բաղկացեալ ոտանաւոր մ'ալ
գրել, ինչպէս որ իւր քսանի չափ ո-
տանաւորներն ալ արձանագրուած
կը կենան վարժարանին մէջ, և որք
յաջորդաբար հրատարակութեան պի-
տի արուին ուրիշ աշակերտութեանց
ցարդ հրատարակուած չորս ոտա-
նաւորներուն պէս :

Եթէ Մեծ. նամակագիրը մեր այս
ըսածներով կը համազուի, թէ մեր ա-
շակերտութիւնք 'ինչպէս արձակ գրու-
թեանց' նոյնպէս և ոտանաւոր գրե-
լու մէջ վարժ են և բանագործութեան
հարկ չունին, մեզի ալ ըսելիք չմը-
նար. իսկ եթէ կը տարակուսի, կը հը-
րաւերենք զինքը՝ յետ իւր երկուց
ամսոց դալ ներկայ դառնուել աշակեր-
տութեանց և աշակերտաց հարցաքնն-
նութեան և նոյն առիթով վիճակն ու
կարողութիւնը իմանալու, այն տեսն
Մեծ. նամակագիրը պիտի համազուի
թէ նոյն Օրիորդը և թէ իւր ընկե-
րակիցք իմաստասիրական և բանաս-
տեղծական գրութեանց վարժ ըլլա-
լով բանագործութեան կարօտութիւն
չունին :

Իսկ Մեծ. Գեղեցեան էֆէնտի' նը-
կատմամբ միայն այսչափ կը տեսն
թէ հրատարակաց աստիճանը հանած բաղ-
մամբ ոտանաւորներն և արձակ գը-
րութիւնները, նաև իւր գրական հան-
րածանօթ հանճարը կենդանի ապա-
ցոյցներ են համոզելու զամեն ոք թէ՛
նա երբէք պէտք չունի այլոց հան-
ճարին ծնունդը իրեն սեփականելու,
և կամ զայն իբր իւր աշակերտաց
յառաջագիւղութեան երախայրիքը
հասարակաց ատենին ներկայացնե-
լու :

Տեսուչ

Ճեմ Երկս. վարժարանի
Խորէն Գառնիս ֆէնտի' շնորհ

26 մայիս 1874

Իւսկիւնտար

Ենի-Մահալլէ

... Խմբագրագետ Մասին պատ-
ւական լրագրոյ :

Վաղը որ է շարժ յունիս 1,
Թաղիս Բանկալթիլի Աղգային նախորդ-
գերեզմանատան խոր—վիրապ եկե-
ղեցոյն անուան տնայնապետութիւնն
ընկերուն առթիւ, Թաղիս Աղգ. եկե-
ղեցեաց ընդհանուր Բարոյիչ Արժ.
Տ. ներսէն վարդապետ Ասլանեան, հե-
տեւալ յունիս 2 կիրակիէ օրն նոյն
Ս. եկեղեցոյ մէջ յատուկ Ս. պատա-
րագ մատուցանելով և քարոզ խօ-
սելով ջերմեռանդ ժողովուրդն 'ի հո-
գեւորս պիտի միմիջարէ :

Ուստի, ... Էֆէնտի, ներկայս
ի դիտութիւն պատուական լրագրոյդ
մէջ յառաջիկայ թերթով ծանուցա-
նելիդ խնդրելով,

31 մայիս 1874

Միամբ յարգանք
Բերա Բերայի Թաղ. խորհրդոյ
Առնապարտի վ. Ատենապետի
Զ. Պետրոսեան Բ. Ղազարեան

Հ Ր Ա Ի Ս

Առ աւրաւ Ս. և Հ. Էֆէնտի' շնորհ
Մեծապատիւ Տէր .

Վանայ Սանդիսեան և Հայկաղ-
եան ընկերութեանց յանձնաժողո-
վոց տարեկան շրջանն լրացած ըլլա-
լով, յառաջիկայ կիրակի, յունիս 2,
խառն ընդհանուր ժողով պիտի գո-
մարուի 'ի Մերձան Ալի փաշայի խա-
նը, ժամ 8 իշ. Կին :

Ուստի կը հրաւիրեմք զձեր մե-
ծապատուութիւնն, որ բարեհաճիք
ներկայ դառնուել սոյն ժողովոյն, ուր
պիտի տնօրինուին հետեւեալները .
Ա. Երուանդեան Տ. Գալուստ հօր

ձեռամբ 'ի Գորջան նուիրատուաց ա-
ռաջարկութեան միջոցներ խորհիւ և
տնօրինել :

Բ. Երկու ընկերութեանց յանձ-
նաժողովներէն տարեկան հաշիւները
առնուել և նորոգ ընտրութեանց ձեռ-
նարկել : Ի դիմաց Ս. և Հ. Էֆէն-
տի 30 մայիս 1874 թուական գիւնի
Կ. Պօլիս Ատենապետ
Վարդան Պապիկեան

Ե. Օ. Գ.

Ենիքեղի Ս. Աստուածածնոյ ե-
կեղեցոյ սեպհական նոյն գիւղին
Կիւղէճէ Ալի փաշա թաղին մէջ գըտ-
նուած երեսուն եւ հինգ հազար կան-
դունի չափ գետինը 'ի վաճառ հան-
ւած է, եւ մաս առ մաս պիտի ծախ-
ուի պատրաստուած յատակագծին հա-
մաձայն :

Սոյն օգտուուն եւ գեղատեսիլ գեա-
նին վրայ շինուածներ կառուցանելու
իրատէն եղած է արդէն. ուստի գնոյ
առնելու հետամուտ անձինք կը հը-
րաւերուին կիրակի եւ ուրբաթ օրերը
Ենի Գիւղի Թաղական խորհրդարանը
կամ հինգշաբթի օրերը Չուխաճի խանի
վերնայրիւ թիւ 22 Մեծ. Պէրպէս-
եան Անգլիական աղային սենեակը ներ-
կայանալ, եւ պէտք եղած տեղեկու-
թիւններն ստանալ :

Ե. Օ. Գ.

Սմբատեան Նէվրուզ Տիկնոյ ամու-
սին, Մեծապատիւ Դաւթեան Սար-
գիս աղայն անդաւակ մեռնելով Լան-
կա Եալընը Պաղալ փողոց Ն. 34 իւր
ունեցած տունը և անոր կից պար-
տէզը մահիւ ինկած է թաղիս Ս. Գե-
որգ եկեղեցոյն :

Հետեւաբար վերոգրեալ մահիւ
ները աճուրդի հանուելով մինչև հի-
մա (10,000) տասն հազար զրուչի ե-
լած է :

Ուստի ով որ յիշեալ տունը եւ
պարտէզը ծախու առնել ուզէ, մին-
չև մէկ ամիս կրնայ խորհրդարանն
ներկայանալ ամէն առաւօտ 'ի ժամ 1,
27 մայիս 1874
Սամաթիա

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ա. ՏՐԱԳԻ

ԵԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ ԵԱՅՏՆՈՒԹԻՒՆՔ

Կ ա մ

Պարտէս Բաճուս Գեորգի' շնորհ
'ի նախնի ժամանակաց հետէ ֆէնտի' շնորհ
Թարգմանեաց Ն. Ճիւանեան

Բովանդակութիւն. — Մոգական,
հրաշագործական եւ ըզձական ար-
ուեստք. Գաղտնիք, Խորհուրդք, Կո-
չումն օգուոց, Երեւմունք, Սրբազան եւ
Ժողովրդական ուրուատեսիլք. Մե-
քենագիտութիւն, Թունաբանութիւն,
Հրաբուհատ, Կախարդութիւն, Գիշե-
րաժողով միջկայ, Վհուկք, Դիւստէք,
Բժժանք, Յուսուծք, Մոգական օժու-
մըն, Զղատարաւորք, Փիլիսոփայական
քար. Մագնիսականութիւն, Երեւոյ-
րականութիւն եւ այլն եւ այլն :

Տեսող առ տեսող պիտի հրատա-
րակուի. Գին մէն մի տեսլին 40 փա-
րայ :

Կը ծախուի Գալուստեան եւ Յրէնկ-
եան գրատուններն 'ի Կ. Պօլիս եւս եւ
Մաթեոսեանի Պարագան կամ ջինք գը-
լուի :

Ա. Տրպէյի սոյն հետաքրքրաշարժ
գործն ամբողջ թարգմանուած ըլլա-
լով, միւս տեսլներն եւս հետըզ-
հետէ անյայտ պիտի հրատարակ-
ուին :

ՄԻՆԱՍ 26 ՅՈՒՆ
ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ
Տաղեր, Հատեր, Առանձներ, Նամակներ,
Գրադատումներ, Արդասի Խոհերը :

Առաջին Տպագրութիւնն
Գին 15 Ղրոն

Այս գրքին կեդրոնատեղին է Սը-
րապեան գրատունն. միւս Հայ գըրա-
վաճառներն ալ կը ծախեն զայն :
Հեղինակը իւր այս առաջին գոր-
ծին մէջ փորձած է մի վերջնական
կանոնաւորութիւն տալ մեր աղգա-
յին լեզուին . Հայ գրագէտները կը
հրաւիրէ քննել զայն : — Ամեն կարգի
անձեր կրնան օգտակարապէս ըն-
թեռնուել այս գիրքը մանաւանդ ու-
սանողները, նոր սերունդը :

ԵԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԽՈՒՄԱՆՈՒԹԻՒՆ
Յիսուս տունն ոտանաւոր թերթ
մ'է, որ կը ծախուի Մէրձանը գըրա-
վաճառ Պաղատար աղայի խանութը :

Գին 40 փարա

Ի Լ Ա Ն
Գալէփթեանի ամիրէ Իլուն լու-
ղումի օլան 7500 առէտ եւ իւր իմալի
պէյաղ վաքէթանը պէհէր քըյէսի
35 զրուչէ թալիպ էօհտէսիտէ օլուպ,
հաղիրանը բուվինի 4ինճի սալը կիւ-
նիւ գարարը գաթիսի իճրա օլունա-
ճաղընտան, իթա իթմէյէ թալիպ օ-
լանլէրին եէփմի մէղքիւրտէ Տարի Շու-
րայի ասքէրլիյէ կէլմէլէրի :

31 մայիս 1874 Պապը Սէրասքէր

Ասաքիլի Եահանէ ֆուրուշարը
իչին միւսպալտա օլունաճաք օլան 10,
000 չէքի հաթապըն պէհէր չէքիսի
17 զրուչա օլարաք թալիպի էօհտէ-
սիտէ օլուպ, իչպու հաղիրանը բու-
վինի իւլիւնճի փաղար իրթէսի կիւ-
նիւ գարարը գաթիսի վէրլիճէյին-
տէն, իթա իթմէյէ թալիպ օլանլէ-
րին եէփմի մէղքիւրտէ Տարի Շուրայի
ասքէրլիյէ կէլմէլէրի :

1 Հաղիրան 1874 Պապը Սէրասքէր

Չըրար Սարը օթ թահթալ առէտ
6000 պէհէր 100 փարա, Գըղաղը
առէտ 2000 պէհէր 80 փարա :

Սարը Խալիմա ապարարըն 3425
պէհէր արընը 9 զրուչ 30 փարա :

Էլ շաեաղ արըն 2550 պէհէր
արընը 10 զրուչ :

Թիմուրտէն մա'մուլ կէմ առէտ
3500 պէհէր 18 զրուչ :

Սիւեա Ֆրանսըզ փաշա սալթի-
եանը առէտ 150 պէհէր 90 զրուչ :

Ասաքիլի Եահանէ Լիւլիս վէ Սա-
րաթեան վէ Գալէփթեան անպարընա
լուղումի օլուպ միւսաղապայէ գօնը-
լան պալատէ մուհարրէր ալթը գալէմ
էլեա ֆիւսալթը մուրադամէլէրին վէճ
իլէ թալիպէրի էօհտէլէրին օլուպ,
Սարը օթ թահթալը զըղաղըն
իչպու հաղիրանը բուվինի պիլինճի
ճիւմա էրթէսի վէ ապա իլէ շաեա-
ղըն իւլիւնճի փաղար իրթէսի վէ կէմ
իլէ սալթիլեանըն չէհըր մէղքիւր
տէօրուլնճի սալը կիւնիւ գարարը
գաթիլէրի վէրլիճէյինտէ, իթա իթ-
մէյէ թալիպ օլանլարըն զիքր օլու-
նան կիւնլէրտէ Տարի Շուրայի ասքէ-
րիյէ կէլմէլէրի :

27 մայիս 1874 Պապը Սէրասքէր

Ղալթիմ Սէրայը հիւմանեանլիտէ
վաղը համալ քիւրայ վէրլիճէյէ իւղ-
րէ միւղալտէյէ գօնըլարաղ պիլը
պէնլէրի 50350 զրուչա թալիպի էօհ-
տէսիտէ օլուպ, իչպու հաղիրանը
բուվինի ինչիւնճի փաղար էրթէսի
կիւնիւ գարարը գաթիսի վէրլիճէ-
յինտէն, իթիմալթիլէ թալիպ օլան-
լարըն եէփմի մէղքիւրտէ Տարի Շու-
րայի ասքէրլիյէ կէլմէլէրի :

27 մայիս 1874 Պապը Սէրասքէր

